ֆեսիոնալ ռևոլյուցիոներ, մարքս-լենինյան վեհ գաղափարների տաղանդավոր պրոպագանդիստ նա իր ամբողջ ուժերը նվիրեց բանվոր դասակարգի ազատագրման, Անդրկովկասում սովետական կարգեր հաստատելու գործին։ Մեծ են նրա ծառայությունները Անդրկովկասի աշխատավորության կազմակերպման, ռևոլյուցիոն գիտակցության բարձրացման գործում։ Դեռևս ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում Շահումյանը մահացու հարվածներ է հասցրել բուրժուական նացիոնալիզմին և հատկապես հայ մողովրդի ամենաոխերիմ թշնամի դաշնակցությանը։

Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ Շահումյանը Ս. Սպանդարյանի հետ միասին, խոշոր աշխատանք է կատարել Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունները ստեղծելու համար։ 1902—1907 թվականներին Շահումյանի ղեկավարությամբ ստեղծվեցին Լոռու, Երևանի, Ալեքսանդրապոլի և այլ վայրերի առաջին սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները։ Ստեփան Շահումյանը եղել է Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից մեկը, նավթաշխարհի բանվորների սիրելին։

Լենինի և Ստալինի անմիջական ցուցումներով, 1917 թվին Բաքվի բոլշևիկները Շահումյանի ղեկավարությամբ անհաշտ պայքար մղեցին մենշևիկների, էսեռների, մուսավաթականների ու դաշնակների դեմ, Անդրկովկասում պրոլետարական դիկտատուրա հաստատելու համար։ Այդ պայքարում հերոսաբար ընկավ Ստեփան Շահումյանը Բաքվի կոմունայի մյուս կոմիսարների հետ միասին։

Սովետական ժողովուրդների և հատկապես Անդրկովկասի աշխատավորների սրտերում միշտ վառ կմնա պրոլետարական ռևոլյուցիայի մարտիկի, Լենին-Ստալինի հավատարիմ աշակերտի ու ճարտական զինակցի՝ Ստեփան Շահումյանի հիշատակը։

Զեկուցումից հետո ժողովի մասնակիցները ողջույնի նամակ ընդունեցին, ուղղված ժողովուրդների սիրելի առաջնորդ մեծ Ստալինին։

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 13—14-ին տեղի ունեցավ ՀամԿ(բ)Պ Կենտկոմին կից Մարքս-էնգելս-Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալի գիտական սեսիան՝ նվիրված Ստ. Շահումյանի ծննդյան 70-ամյակին։

Գիտական սեսիան բաց արեց պատմական գիտությունների թեկնածու ընկ. Վ. Ավետիսյանը։

«Ստ. Շահումյանի պայքարը բուրժուական նացիոնալիզմի դեմ» թեմայով զեկուցեց պրոֆ. Մ. Ներսիսյանը։

Զեկուցողը մանրամասնորեն ցույց տվեց, որ Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտ Ստ. Շահումյանը իր ամբողջ ռևոլյուցիոն գործունեության ընթացքում անհաշտ պայքար է մղել բուրժուական նացիոնալիզմի իդեոլոգիայի և հատկապես հայ իրականության մեջ եղած բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության դեմ։

Սեսիայիս մասնակցողները մեծ հետաքրքրությամբ լսեցին ՀամԿ(բ)Պ Կենտկոմին կից Մարքս-էնգելս-Լենինի ինստիտուտի ադրբեջանական ֆիլիալի աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Կազիևի զեկուցումը «Ստ. Շահումյանը և Բաքվի կոմունան» թեմայով։ Զեկուցողը նկարագրեց Ստ. Շահումյանի և նրա ընկերներ Ազիզբեկովի, Ջափարիձեի, Ֆիոլետովի և մյուսների խոռն պայքարը հանուն Սովետական իշխանության հաստատման՝ Բաքվում։ Ընկ. Կազիևը մանրամասն կանգ առավ գերմանա-թուրքական և անգլիական իմպերիալիստների դեմ Բաքվի կոմունայի կողմից մղված պայքարի վրա։

ձե

Սեսիայի հոկտեմբերի 14-ի նիստում զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու ր. Օհանջանյանը «Ստեփան Շահումյանի ռևոլյուցիոն գործունեությունը ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում» թեմայով։

Պատմական գիտությունների թեկնածու ր. Մնեյանը զեկուցեց «Ստ. Շահումյանի ռևոլյուցիոն գործունեությունը ստոլիպինյան ռեակցիայի, ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի և իմպերիալիստական առաջին պատերազմի ժամանակաշրջանում» թեմայով՝ Զեկուցողն ուշագրավ փաստերով ցույց տվեց, թե ինչպես Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ Ստ. Շահումյանը լիկվիդատոր մենշևիկների և նացիոնալիստների դեմ մղված պայքարում համախմբում էր Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններին։ Իմպերիալիստական պատերազմի տարիներին Շահումյանը հետևողականորեն պաշտպանում էր պատերազմի վերաբերյալ լենինյան գիծը։